

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Միքայել Մալխասյան (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Микаэл Малхасян (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Mikayel Malkhasyan (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН	7
Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար - ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՏՈՒԳԱ-ԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵՂԱԿԱՆ ԵՎ ԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒՆ.....	22
Vigen Tsatryan, Ruslan Kobzar - TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGHT OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES.....	22
Արգիշտի Վարդանյան - ՄԱՍԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՂՄԱՃՅՈՒՂԻ ՄԻ ՃՇՁԳՐՏՈՒՄ.....	23
Аргишти Варданян - ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ	29
Argishti Vardanyan - A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY	29
Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲԼԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ.....	30
Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ.....	38
Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16 TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS.....	38
Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՈՈՄԻ ՊԻՈՒՄ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՉՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ.....	39
Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX	54
Feliks Movsisyan - THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI" ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER.....	55
Հովիկ Գրիգորյան - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱՃ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ).....	56
Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.)	72
Novik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAK-SUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905).....	73
Գայանե Հովհաննիսյան - ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ.	74
Гаяне Оганнисян - ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. - В 1930-Х ГГ.....	82
Gayane Hovhannisyan - DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S - IN THE 1930S.....	83
Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.).....	84

Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.)	89
Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994)	89
Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՐԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	90
Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ	95
Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY	95
Լիլիթ Սալարյան – ԶԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)	96
Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ)	103
Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS)	103
Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՐԴՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍԱՍՅԱԿԱՆԵՐՈՒՄ ... 104	
Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА	113
Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY	114
Էդգար Չախոյան – ՉԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱԿՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎՎԱՍՈՒՄ ՎՐԱՍԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (1991-2019 ԹԹ.)	115
Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.)	134
Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019)	135
 ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY	
Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԱՆԻԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՎԵՍ - XX ԴԱՐԻ ՍԿԻՉԲ)	136
Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.)	146
Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY)	147
Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՉԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻԱՍԻ ՓՆՏՐՏՈՒԹՅՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ	148
Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО.	155

Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO 155

ԱՐՇԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Աննա Դավթյան – 13-րդ դարի խաչքարերի շարքաշեղծերը..... 156
Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА..... 164
Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES)..... 164
Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ԶԱՂԱԹԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻՉԱՅԼԸ..... 172
Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ 175
Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA “НОКТЕМБЕР” IN GYUMRI 176
Զահրա Մալեթի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼԼԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՍՈՒԼԻ ԱԶԵՐԵՐՈՎ 177
Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ 187
Zahra Maleqi – HAFEZ’S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI..... 187
Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱՇՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱԿՈՒՄԸ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՉԿԵՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ.... 188
Марине Геворкян, Гаяне Товмасын – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ 198
Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION 198

ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ..... 199
Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ “ИСТОРИЯ АРМЕНИИ” КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ..... 204
Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSIS’ “HISTORY OF THE ARMENIANS” 205
Վահագն Հակոբյան – ԴՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 206
Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА..... 218
Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN’S LETTERS..... 218

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լիլիթ Մինասյան – ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԸՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՉԿԵՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)..... 219

Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ)..... 229

Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH)..... 229

Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 230

Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ..... 236

Meri Hovhannisyann - FEATURES OF USING THE DEBATE METHOD..... 236

Արմեն Խաչիկյան - ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈՆԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆԿՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈՂԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆԿԱԾ ՈՒՃԵՐՈՒՄ..... 237

Армен Хачикян - ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА..... 246

Armen Khachikyan - MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES..... 246

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈԿՍԻՍՅԱՆ, ՄԻԶԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲԱՂԱԲՅՈՒՐՆԵՐԻ ԶՐԵՍՏՈՄԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷԶ:.....

247

ՀՈԿՆԱՆ ԶԱՆՅԱՆ (ՀՈԿՀԱՆՆԵՍ ԱՂԱԶԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈԿ, ԵՐ., ԷՂԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷԶ:.....

247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՉ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐԶԻՑ ՄԻՆԶԵԿ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷԶ:.....

250

ՆՈՐ ԳԻՐԶ ԵՐԿՐՈՐԴ ԱԾԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՅԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Յ. Գ. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ-ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.)..

252

ՄԵՐ ԵՐԱԽՏԱԿՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼԵՈՆՅԱՆ.....

255

ԷՂԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ.....

258

ՀԱԿԵՐԺԻ ԵԱՍՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021).....

263

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ..... 266

INFORMATION ABOUT THE AUTHORS..... 267

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ..... 268

NOTICE FOR THE AUTHORS..... 268

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ..... 269

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Լիլիթ Չակոբյան

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱ- ՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ

Հիմնաբառեր. Կիրակոս Գանձակեցի, 13-րդ դար, պատմիչ, «Պատմութիւն հայոց», համաձայնություն, գրաբար, միջին հայերեն, ենթակա-ստորոգյալ կապակցություն, որոշիչ-որոշյալ:

Սույն հոդվածում անդրադառնում ենք նախադասության անդամների կապակցման եղանակներից մեկին՝ համաձայնությանը, և նրա արտահայտությանը 13-րդ դարի հայ նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում: Մինչ պատմիչի երկում արձանագրված կառույցների առանձնահատկություններին անդրադառնալը համառոտ ներկայացվում է նախադասության անդամների համաձայնության պատկերը գրաբարում և միջին հայերենում, նաև տարբերությունները լեզվի վարձագման՝ վերը նշված փուլերում, գրաբարում և միջին հայերենում նախադասության անդամների համաձայնության առանձնահատկությունները: Ապա հանգամանորեն քննարկվում է վերջինիս արտացոլումը երկում: Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» գրքում արձանագրվել են հիմնականում գրաբարյան շարահյուսական օրինաչափություններ՝ չնայած նրան, որ հեղինակն ապրել ու ստեղծագործել է միջին հայերենի գործածության ժամանակահատվածում:

Նախադասության անդամների համաձայնությունը արտահայտվում է հիմնականում հին հայերենի շարահյուսական համակարգի առանձնահատկությունների համաձայն: Միջինհայերենյան ժամանակահատվածում ապրած և ստեղծագործած պատմիչը, այնուամենայնիվ, առավելապես առաջնորդվել է գրաբարի քերականության օրինաչափություններով: Դա բացատրվում է նրանով, որ Կիրակոս Գանձակեցին ներկայացնում է պատմագրություն ուղղությունը և որոշակի ժամանակաշրջանի պատմության անդրադառնալիս պիտի հարապատ մնա այդ շրջանի ոգուն, նաև քերականական համակարգի առանձնահատկություններին: Ուսումնասիրվող երկում վկայված կապակցությունների համաձայնության հարցում ևս պատմիչը հետևել է գրաբարի քերականական համակարգի օրինաչափություններին:

Ողջ երկում գործածված են նախադասության թե՛ գլխավոր, թե՛ երկրորդական անդամների կապակցման օրինակներ, որոնցում գերակշռում են համաձայնության՝ գրաբարին բնորոշ օրինաչափությունները:

13-րդ դարի հայ մատենագրության վառ ներկայացուցիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկն աչքի է ընկնում գրաբարին բնորոշ քերականական ձևերի ընդգրկուն ներկայացմամբ. նախադասության անդամների կապակցման եղանակների արտահայտությունը բացառություն չէ: Դրանցից մեկը՝ համաձայնությունը, կապակցման այն եղանակն է, որի դեպքում գերադաս անդամը և լրացումը տվյալ կապակցության կառույցում ունենում են քերականական միևնույն հատկանիշները, օրինակ՝ բացահայտիչը համաձայնում է բացահայտյալին հոլովով, թվով և հոդառնությամբ, կամ հետադաս որոշիչը գրաբարում թվով, հոլովով, հոդով համաձայնում է որոշյալին¹:

* Հոդվածը ներկայացվել է 07.06.2021 թ., գրախոսվել՝ 07.07.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

¹ Աբաջյան Ա., Դիլբարյան Ն., Յուլբաշյան Ա., Հայոց լեզվի պատմություն, Երևան, 2017, էջ 415:

Լեզվաբան Մանուկ Աբեղյանը նախադասության անդամների կապակցման այս եղանակը բնորոշում է այսպես. «Համաձայնությունը, որ հիմնված է բառերի ներունակության տրամաբանական հարաբերության վրա, լինում է բառերի ձևով, այսինքն՝ իրար հետ կապակցվող բառերը, լրացումն ու լրացյալը դրվում են թվով, դեմքով և հոլովով միակերպ»¹:

Չին հայերենում համաձայնությունը՝ իբրև նախադասության անդամների կապակցության եղանակներից մեկը, առկա է նախադասության թե՛ գլխավոր, թե՛ գլխավոր ու երկրորդական անդամների միջև:

Նախադասությունների շարահյուսությունը գրաբարում և միջին հայերենում ունի մի շարք ընդհանրություններ: Սակայն կան նաև զգալի տարբերություններ: Թե՛ գրաբարում, թե՛ միջին հայերենում նախադասության գլխավոր անդամներ ենթական ու ստորոգյալը թվով ու դեմքով համաձայնում են: Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում վկայված ենթակա+ստորոգյալ կապակցություններում ևս առկա է այդ համաձայնությունը:

Ինչպես շարահյուսորեն հարաբերվող միավորների յուրաքանչյուր զույգի, այնպես էլ ենթակայի և ստորոգյալի փոխդասավորության կարգը գրաբարում ազատ է, դրանցից շատերի (որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ և այլն) համեմատությամբ՝ նույնիսկ ավելի ազատ²:

Պատմիչի երկում ենթական հիմնականում դրված է ստորոգյալից առաջ, բայց կան նաև հակառակ երևույթներ: Ներկայացնենք բնագրային օրինակներ:

Նոբա հալածեցին զնա՝ սպառնացեալք մահու չափ (57): **Չի այր զօրաւոր էր** Ալի և **արք զօրաւորք**, որ ընդ նմա (57): **Նիստ դու** յԱղէքսանդրիա քաղաքի յաթռն Մարկոսի (97): **Գնաց թագաւորն** Գագիկ իջևանս առնել առ մետրապօլտին (100): Իսկ սբանչելի **հայրապետն** Գրիգորիս օր ըստ օրէ **յաւելոյր** ի բարեգործութիւն ի պայծառութիւն եկեղեցոյ (117): Եւ **ինքն ինամեր** գտուն իւր (393)³:

Ինչպես ներկայացված օրինակներում, այնպես էլ պատմիչի ողջ երկում, չնչին տարբերությամբ, գերակշռում են **ենթակա+ստորոգյալ** կապակցությունները: Նշենք, որ երկում արձանագրված 1339 օրինակներից 720-ում (54%) առկա է **ենթակա+ստորոգյալ** կառուցատիպը, իսկ մյուս օրինակներում ստորոգյալն է դրված ենթակայից առաջ: Ուշագրավ է այն, որ **ենթակա+ստորոգյալ** կապակցությունների օրինակների շուրջ 40%-ում ենթական արտահայտված է դերանունով:

Գիտենք, որ բազմակի ենթակաների հետ դրվում է հոգնակի ստորոգյալ, **ինչպես՝ Եւ տառապէին մարդ և անասուն** ի խիստ և ի դառն վերակացուացն (396): Սակայն պատմիչի երկում վկայված են նաև օրինակներ, որոնցում բազմակի ենթակաների հետ գործածվում է եզակի ստորոգյալ, **ինչպես՝ Ծովն ընկենոյր ձուկն և փայտ (21)**:

Գրաբարում նախադասության անդամների կապակցության ամենակենսունակ օրինակաչափություններից մեկը որոշիչի հետադաս գործածությունն էր և **որոշիչ-որոշյալ** համաձայնությունը:

Լեզվաբանական գրականության մեջ որոշիչի շարադասության և **որոշիչ-որոշյալ** համաձայնության վերաբերյալ մոտեցումները որոշակիորեն տարբերվում են իրարից: Ս. Ղազարյանի պնդմամբ՝ 5-րդ դարում ուրվագծվում էին որոշիչների նախադաս գործածության և չհամաձայնելու ընդհանուր միտումներ⁴: Գ. Ջահուկյանի մեկնաբանությամբ՝ գրաբարի շարահյուսական համակարգը բնութագրվում է որոշիչների, հատկացուցիչների և կապի խնդիրների՝ հիմնականում հետադաս գործածությամբ, և ավելացնում, որ այդ համակարգին բնորոշ է որոշիչների գերակշռող մեծամասնության համաձայնեցումը⁵: Եդ. Աղայանի

¹ Աբեղյան Մ., *Հայոց լեզվի տեսություն*, Երևան, 1965, էջ 497:

² *Հայոց լեզվի պատմության հարցեր*, հ. 2, Երևան, 1985, էջ 131:

³ Գանձակեցի Կիրակոս, *Պատմութիւն հայոց*, աշխ.՝ Կիրակոս Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961: Այսուհետ օրինակների մոտ կնշենք միայն էջը:

⁴ Ղազարյան Ս. *Հայոց լեզվի պատմություն*, Երևան, 1954, էջ 116:

⁵ Ջահուկյան Գ., *Հայոց լեզվի վարդապետական փուլերը*, Երևան, 1964, էջ 38:

համոզմամբ՝ 5-րդ դարի մատենագրության մեջ գերակշռում և իբրև ընդհանուր օրինաչափություն հանդես է գալիս որոշիչ հետադաս գործածությունը¹: Յ. Ավետիսյանն իր «Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում» արժեքավոր աշխատության մեջ նշում է, որ թեև գրաբարում որոշիչները մեծ չափով գործածվում են թե՛ նախադաս, թե՛ հետադաս, սակայն գերակշռողն ու բնորոշը նախադաս գործածությունն է: Չնայած դրան՝ նա նշում է, որ որոշիչ հետադաս գործածությունները նախադասի նման պետք է համարել բնական և ոչ շրջուն շարադասության արտահայտություն²: Յ. Ավետիսյանի գնահատմամբ՝ «... որոշիչները որոշյալի հետ հոլովով ու թվով ազատ կերպով դրվում են և՛ համաձայն, և՛ անհամաձայն չհամաձայնաձևների նշանակալից գերակշռությամբ: Ետադաս որոշիչները, որպես ընդհանուր կանոն, հոլովով ու թվով համաձայնում են որոշյալին, իսկ նախադաս որոշիչները չեն համաձայնում, սակայն կան առանձին բացառություններ³»:

Ստ. Մալխասյանցը, իր աշխատության մեջ համապարփակ ու բազմակողմանի քննության ամենելով որոշիչ համաձայնությունն ու շարադասությունը, արձանագրում է, որ որոշիչը գրաբարում դրվել է և՛ նախադաս, և՛ հետադաս՝ երկու դեպքում էլ համաձայնելով հոլովով ու թվով, իսկ նախադաս ածականի հոլովով ու թվով անհամաձայնությունը դիտարկում է որպես ընդհանուր օրինաչափություններից կատարվող շեղումներ⁴:

Միջին հայերենում որոշիչները հիմնականում նախադաս են գործածվում և չեն համաձայնում⁵:

Չարկ ենք համարում արձանագրել, որ Գանձակեցու երկում վկայված են **որոշիչ-որոշյալ** կապակցությունների 837 օրինակներ, որոնցից 511-ում (61%) որոշիչը հանդես է գալիս նախադաս, իսկ 326-ում (39%)՝ հետադաս դիրքում: Նշված օրինակները քննարկենք՝ ըստ որոշիչ արտահայտության: 13-րդ դարի պատմիչն իր երկում գործածել է ածական և թվական որոշիչների բազմաթիվ օրինակներ՝ թե՛ նախադաս, թե՛ հետադաս շարադասությամբ: Ներկայացնենք բնագրային օրինակներ, որոնցում ածականներն ու թվականները գոյականների հետ գործածվում են և՛ նախադաս, և՛ հետադաս:

Մեծագոր (և քաջ արքային (6), պայծառ պատմութեամբ (6), յիսուն ամաց (25), գերորդ ժամուն (35), ի վեցն յունվարի (38), առաջին պտղոյն (127), ի յերկրորդ գալստեանն (129), ի հինգ տօնէն (130), արագաթև նաւովն (160), փափուկ մարմինք (259), ի պատուական մարմնոյ (259):

Ի Կոստանդիանոսէ մեծէ (5), յաւուր միում (19), վարդապետք անուանիք և իմաստունք (111), ամի միոյ (116), ձկունք ազնիվք (117), զօրօք բազմօք (180), աղետք տրտմագինք (239), ձիոց պղծոց (259), հանդերձս մեծագինս (269):

Ինչպես տեսնում ենք, Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Յայոց» երկում հավասարապես վկայված են ածականով և թվականով արտահայտված որոշիչների՝ թե՛ նախադաս, թե՛ հետադաս գործածությամբ օրինակներ: Մեծ թիվ են կազմում նաև այն օրինակները, որոնցում մի թվականը գործածվում է որպես նախադաս և հետադաս որոշիչ և երկու դեպքում էլ հոլովով համաձայնում է, ինչպես՝ յաւուր միում (114), ի միում աւուր (130):

Ինչ վերաբերում է դերանուններին, ապա պիտի նշենք, որ գրաբարի որոշ դերանուններ հոլովվում են անվանական հոլովմամբ՝ համապատասխան հոլովիչներով, իսկ որոշ դերանուններ՝ առանց հոլովիչների՝ արմատների յուրահատուկ փոփոխություններով⁶: Միջին հայերենում դերանուններն ունեն իրենց հոլովական հատուկ համակարգը, որն իր ընդհանուր դրսևորումներով ավելի մոտ է բարբառների և ժամանակակից հայերենի, քան գրաբարի դերանունների հոլովական համակարգին:

¹ Աղայան Էր., Յայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Երևան, 1962, էջ 260:

² Ավետիսյան Յ., Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում, Երևան, 1972, էջ 10-11:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 34:

⁴ Մալխասյանց Ստ., Գրաբարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892, էջ 93:

⁵ Ղազարյան Ա., Յայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 2006, էջ 254:

⁶ Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1964, էջ 86:

Անդրադառնալով Կիրակոս Գանձակեցու երկում վկայված դերանուններով արտահայտված որոշիչ-որոշյալ կապակցություններին՝ կարող ենք ասել, որ մեծ թիվ է կազմում ցուցական, հատկապես այս, այդ, այն դերանունների՝ գոյական անունների հետ գործածությունը: Այստեղ ևս գործում են գրաբարյան օրինաչափությունները. նախադաս գործածվելիս հոլովով և թվով համաձայնում են գոյական անուններին (բացի հոգնակի ուղղական, հայցական, մասամբ՝ գործիական հոլովներից), հոլովվում են կարճ ձևով, իրենց վրա են կրում գոյականների նախդիրները, իսկ հետադաս գործածվելիս հոլովով ու թվով համաձայնում են գոյական անուններին, սակայն հոլովվում են երկար ձևով, գոյականների նախդիրները կրկնվում են դերանունների վրա, գոյականներն ստանում են համապատասխան դերանվան հոդը՝ *ս, դ, ն*¹: Ներկայացնենք պատմիչի երկից օրինակներ:

Յայնմ օրէ (98), յայսմ ամի (215), յայսմ վայրի (278), յայնմ կողմանէ (395), յայնմ տեղուց (176), այսր պատճառի (179):

Մանկանցն այնոցիկ (26), զարսն զայնոսիկ (50), զեղբօրես զայսմանէ (115), զերկուս տօնս զայսոսիկ (131), ի քաղաքէդ յայդմանէ (165):

Մ. Մինասյանը նշում է, որ *սոյն, դոյն, նոյն* դերանուններով արտահայտված որոշիչները կարող են լինել որոշիչ կամ հատկացուցիչ: Լեզվաբանը առաջարկում է դրանք տարբերելու հետաքրքիր ձև. եթե նշված դերանունները գոյականի հետ գործածված են նախադաս, ապա որոշիչ են, իսկ հետադաս գործածությունը Մ. Մինասյանը համարում է հատկացուցիչ²: Սակայն այդ դերանունների հետադաս կիրառության՝ վերը նշված օրինակները ցույց են տալիս, որ որոշիչ իմաստ են արտահայտում:

Հատկացուցիչը գրաբարում հանդես է գալիս թե՛ նախադաս, թե՛ հետադաս, թեև ավելի մեծ տարածում ունի հետադաս հատկացուցիչ գործածությունը: Ինչպես գիտենք, հայերենում գոյականով արտահայտված հատկացուցիչը սովորաբար դրվում է սեռական հոլովով: Այդ օրինաչափությունը վերաբերում է բոլոր խոսքի մասերով արտահայտված հատկացուցիչներին՝ բացի ստացական և «**իւրաքանչիւր**» դերանուններից³:

Բերենք նմանատիպ մի քանի օրինակներ Կիրակոս Գանձակեցու երկից:

Ակնարկելով **ազդեցութեան հոգւոյն**, որ կարողն է իմաստնացուցանել զտգետս (4): Եւ հրամայեաց ամենայն քաղաքին խրախանալ **զենմամբ խաշանց** (12): Եւ պայծառ **ջահն եկեղեցոյ** սուրբն Յոհան Ոսկեբերանն, որ լուսաւորեր զընդհանուր եկեղեցիս **Քրիստոսի վարդապետութեամբ** բանին կենաց (24): Համբաւ քաջութեան նոցա ել ընդ բազում գաւառս (164): Եւ նոքա արարեալ **զհրամանս արքային իւրեանց** տան ի **ձեռս նորա** զիսլաթ (292): Եւ երկու **եղբարք նորա** հակառակէին ընդ միմեանս վասն թագաւորութեան (394):

Երբեմն հատկացուցիչը սեռականի փոխարեն դրվում է տրական հոլովով. նման օրինակներ վկայված են նաև պատմիչի երկում: Հաշվի առնելով, որ սեռական և տրական հոլովների տարբերությունը երևում է դերանունների դեպքում՝ բերենք օրինակներ, որոնցում դերանունով արտահայտված հատկացուցիչը դրված է տրական հոլովով:

Եւ ի **կենդանութեան իւրում** ձեռնադրեաց զսուրբ որդին իւր զԱրիստակես (12): Եւ նիւթեաց ի **սրտի իւրում** չարութիւն (390): Չի պարսիկն, որ ի **տան իւրում** ունէր զնա ի կապանս, տեսեալ նշանս աստուածայինս ի վերայ նորա (392):

Ստացական դերանուններով արտահայտված հատկացուցիչներն ունեն շարահյուսական այնպիսի ուշագրավ հատկություն, որ միայն նրանց է հատուկ իբրև հատկացուցիչների. դա նրանց հոլովական և թվային համաձայնությունն է իրենց հատկացյալին, երբ վերջինս թեք հոլովով է դրված⁴: Ինչպես վկայում են պատմիչի երկից բերված օրինակները, ստացական դերանուններով արտահայտված հատկացուցիչները ևս համաձայնում են իրենց հատկացյալներին: Գրաբարում «շատ դեպքերում հատկացուցիչը սեռական հոլովով

¹ Ավետիսյան Հ., Ղապարյան Ռ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1992, էջ 111:

² Մինասեան Մ., Յատկացուցիչ-յատկացեալ կապակցութիւնը գրաբարում, Երուսաղէմ, 1974, էջ 126:

³ Տէ՛ս նոյն տեղում, էջ 24:

⁴ Տէ՛ս նոյն տեղում, էջ 91:

դրվելու փոխարեն հողվով համաձայնում է հատկացյալի հետ¹»։ Հետագայում այդ օրինաչափությունը խախտվում է։

Կիրակոս Գանձակեցու երկում կան նաև օրինակներ, երբ հատկացյալը բացառական կամ գործիական հողվով է, և գոյականով արտահայտված հատկացուցիչը հողվով համաձայնում է նրան։ Ոչ տալ լռութեան զայսպիսի աղետ տարակուսանաց, զոր լուաք **ականջօք մերովք...** (8)։ Եթէ է կին մի, որ ունի մանուկ մի **յեղբօրէն քումմէ** (152)։ Սորա զաւակ ոչ էր **ի կնոջէն իւրմէ** (152)։ ... Չի ի հօրէ կողմանէ աորի էր (24)։ Եւ մի ոմն ի զօրագլխաց **Հուլաւուին զօրօքն իւրովք** յետս նահանջեաց (396)։

Միջին հայերենում ավելի կենսունակ օրինաչափություն է հատկացուցչի նախադաս գործածությունը։ Ա. Այտընյանը կարծում է, որ առաջադաս կիրառությունը հատկապես բնորոշ է խոսակցական լեզվին։ Թեև մատենագրական զարդարուն ոճի մեջ էլ է հաճախ հանդիպում նույնը, սակայն «թեև գուցէ ավելի ճշդագոյն գրաւոր համարուած ըլլայ յետադաս յատկացուցիչը²»։

Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում վկայված հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունների 534 օրինակում գերակշռում է հետադաս հատկացուցչի գործածությունը։ 521 օրինակում (97%) հատկացուցիչը հանդես է գալիս հետադաս, 13 օրինակում (3%)՝ նախադաս դիրքում։

Ի տարբերություն միջին հայերենի՝ գրաբարում հատկացուցիչ-հատկացյալ կապակցության մեջ հողը դրվում է հատկացուցչի վրա։ Հատկացյալի վրա է դրվում միայն այն դեպքում, եթե հատկացուցիչը հատուկ անուն է։ Եթե հատկացուցիչն արտահայտված է ստացական դերանունով, ապա նրա թե՛ նախադաս, թե՛ հետադաս գործածության դեպքում արձանագրվում է հողվով ու թվով համաձայնություն հատկացյալին։

Գոյականի մյուս լրացում բացահայտիչը նույնպես գրաբարում գործածվում էր բացահայտյալից առաջ կամ հետո, սակայն շատ տարածված էր նրա հետադաս գործածությունը։ Առկա էր նաև բացահայտչի և բացահայտյալի համաձայնություն հողվով ու թվով։ Բացահայտյալի նախդիրը դրվում էր նաև բացահայտչի վրա։ Միջին հայերենում օրինաչափ էր բացահայտչի նախադաս գործածությունը։

Կիրակոս Գանձակեցու երկի՝ այս երևույթին վերաբերող օրինակները նույնպես հիմնականում համապատասխանում են գրաբարյան համակարգի առանձնահատկություններին։ Ներկայացնենք բնագրային օրինակներ։

Եւ հալածեաց զնա Մանուէլ Մամիկոնեան, եղբայր Մուշեղայ քաջի սպարապետի Հայոց (23)։ Եւ կացուցանէ Մանուէլ յաթոռ թագաւորութեանն զերկոսին որդիսն Պապայ՝ զԱրշակ և զՎաղարշակ, զոր փեսայացոյց ինքեան (23)։ Եւ բարուք փոխեալ յաշխարհես, թողու ժառանգակալ զորդի իւր՝ զմանուկն Աբաս երկոտասանամեայ (152)։ Քանզի իբրև մեռաւ մեծ իշխանն Թորոս որդին Լևոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ թագաւորագինն Ռուբենայ յաշխարհին Կիլիկեցոց, Էառ զիշխանութիւնն եքօր որդի նորին, Ռուբեն անուն, որդի Ստեփանեայ (154)։ Յաւուրս ժամանակաց թագաւորութեանն Լևոնի հայոց արքայի էին յԱրևելս երկու եղբարք, որդիք Սարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ Վահրամայ, որդւոյ Չաբարիայ (162)։

Հանգամանորեն ծանոթանալով նախադասության անդամների կապակցման եղանակներից մեկին՝ համաձայնությանը, և նրա արտահայտությանը 13-րդ դարի հայ նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում կարող ենք ասել, որ երկում արձանագրվել են հիմնականում գրաբարյան շարահյուսական օրինաչափություններ՝ չնայած նրան, որ հեղինակը ապրել ու ստեղծագործել է միջին հայերենի գործածության ժամանակահատվածում։

Ի մի բերելով, ամբողջացնելով վերը շարադրվածը՝ կարող ենք փաստել, որ նախադաս

¹ Ղապարյան Ս., Հայոց գրական լեզվի պատմություն, հ. Ա, Երևան, 1961, էջ 499։

² Այտընյան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Երևան, 1987, էջ 104։

սության գլխավոր անդամների կապակցման հարցում պատմիչը հարազատ է մնացել հին-հայերենյան օրենքներին ու օրինաչափություններին: Միջին դարերում որոշակիորեն պարզեցվել էր նախադասության մի շարք անդամների կապակցությունը: Միջինհայերենյան համակարգում առավել կենսունակ էր որոշի, հատկացուցչի և բացահայտչի նախադաս գործածությունը, իսկ նախադաս գործածության դեպքում որոշիչը, ինչպես արդեն նշել ենք, հոլովով ու թվով չէր համաձայնում լրացյալին: Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ միջին հայերենում նախադասության անդամների կապակցությունը զգալիորեն տարբերվում էր գրաբարի նախադասությունների կապակցությունից:

Կիրակոս Գանձակեցու երկում վկայված օրինակներն առավելապես կազմված են գրաբարին բնորոշ օրինաչափություններով, սակայն ածականով, թվականով արտահայտված որոշիչները հիմնականում գործածված են նախադաս, ինչը բնորոշ է միջին հայերենին:

Գրաբարում ցուցական դերանունները որպես որոշիչ (թե՛ նախադաս, թե՛ հետադաս) գործածվելիս համաձայնում են, հետադաս գործածվելիս որոշյալն ընդունում է դերանվանական համապատասխան հոդը: Կիրակոս Գանձակեցու երկում վկայված են թե՛ նախադաս, թե՛ հետադաս որոշիչ օրինակներ՝ 6 1/39 տոկոսային հարաբերակցությամբ:

Պատմիչի երկում նախադասության անդամների համաձայնությունը արտահայտվում է հիմնականում հին հայերենի շարահյուսական համակարգի առանձնահատկությունների համաձայն: Միջինհայերենյան ժամանակահատվածում ապրած և ստեղծագործած պատմիչը, այնուամենայնիվ, առավելապես առաջնորդվել է գրաբարի քերականության օրինաչափություններով: Դա բացատրվում է նրանով, որ Կիրակոս Գանձակեցին ներկայացնում է պատմագրություն ուղղությունը և որոշակի ժամանակաշրջանի պատմության անդրադառնալիս պիտի հարազատ մնա այդ շրջանի ոգուն, նաև քերականական համակարգի առանձնահատկություններին: Ինչ վերաբերում է ուսումնասիրվող երկում վկայված կապակցությունների համաձայնությանը, պետք է արձանագրենք, որ այստեղ ևս պատմիչը հետևել է գրաբարի քերականական համակարգի օրինաչափություններին:

Ողջ երկում գործածված են նախադասության թե՛ գլխավոր, թե՛ երկրորդական անդամների կապակցման օրինակներ, որոնցում գերակշռում են համաձայնության՝ գրաբարին բնորոշ օրինաչափությունները:

Лилия Акобян, СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ “ИСТОРИЯ АРМЕНИИ” КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ. В данной статье рассматриваются особенности одного из видов связи - согласования, и его выражения в произведении “История Армении” выдающегося армянского историка XIII века Киракоса Гандзакеци. Прежде чем обратиться к особенностям данной конструкции в произведении Гандзакеци, кратко представлены общая картина согласования членов предложения в грабаре и среднеармянском языке, различия на вышеупомянутых этапах развития языка, а также особенности согласования членов предложения в грабаре и среднеармянском языке. Затем в исследовании подробно рассматриваются способы выражения последнего в вышеуказанном произведении. Несмотря на то, что автор жил и творил в период использования среднеармянского языка, в “Истории Армении” Киракоса Гандзакеци в основном наблюдаются синтаксические закономерности грабара.

Согласование членов предложения не является исключением: в вышеуказанном труде слова, использованные в различных склонениях, в основном составлены в соответствии с особенностями синтаксической системы грабара. Будучи автором, жившим и творившим в период использования среднеармянского языка, Киракос Гандзакеци, тем не менее, в большинстве случаев руководствовался синтаксическими закономерностями грабара. Это объясняется тем, что он является представителем историографического направления и, обращаясь к истории определенного периода, должен придерживаться духа, а также особенностей грамматической системы данного периода. Что касается

согласования словосочетаний в исследуемом труде, нужно констатировать, что и здесь Киракос Гандзакеци следовал закономерностям грамматической системы грабара.

Во всем произведении встречаются примеры сочетания и главных, и второстепенных членов предложения, и в них преобладают характерные для грабара закономерности согласования.

Ключевые слова: Киракос Гандзакеци, историк XIII века, “История Армении”, согласование, грабар, среднеармянский язык, сочетание сказуемое-подлежащее, определение-определяемое.

Lilit Hakobyan, PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSI'S "HISTORY OF THE ARMENIANS". The present paper addresses one of the ways of connecting sentence parts, i.e. the agreement, and its expression in the “History of the Armenians” by the remarkable Armenian historian of the 13th century, Kirakos Gandzaketsi. Before referring to the characteristics of the sentence structures found in the work of Gandzaketsi, the overall syntactic picture and the agreement peculiarities between the sentence parts in Old (Classical) Armenian (Grabar) and Middle Armenian (Cilician Armenian), as well as the differences existing in the above-mentioned stages of the language development are briefly presented. Afterwards, the reflection of the latter in the aforementioned work is discussed in detail. Even though Kirakos Gandzaketsi lived and worked in the period during which Middle Armenian was in use, mainly Old Armenian/Grabar syntactic patterns are observed in his “History of the Armenians”. The agreement between sentence parts is expressed mostly in accordance with the peculiarities of the syntactic system of Old Armenian/Grabar. However, the historian who lived and worked in the Middle Armenian period was predominantly guided by the grammar patterns of Old Armenian/Grabar. This is explained by the fact that Kirakos Gandzaketsi, being a historian, represents the branch of historiography, and thus referring to the history of a certain period, should remain close to the spirit of the very period, including the peculiarities of the grammatical system. As for the agreement between the word combinations found in the work at issue, it should be noted that here again Kirakos Gandzaketsi followed the grammatical patterns of Old Armenian/Grabar. Examples of the connection of both the main and secondary parts of the sentence, in which the patterns of agreement typical of Old Armenian/Grabar prevail, are identified in the whole work.

Keywords: Kirakos Gandzaketsi, 13th century, “History of the Armenians”, agreement, Grabar, Middle Armenian, subject-predicate connection, modifier-modified lexical unit.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 1

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան
խմբագիր՝ Միքայել Մալխասյան
Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Արովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Արովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200